ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԻ ՍԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ

(1860—70-ական թթ.)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռուսաստանի հետ միանալուց հետո, ինչպես արևելահայ ամբողջ կյանքը, այնպես նաև հասարակական մտքի զարգացումը ներգրավվեց Ռուսաստանի ժողովուրդների և առաջին հերթին ռուս ժողովրդի սոցիալ-քաղաքական և գաղափարական ոլորտներում կատարվող տեղաշարժերի մեջ։ Այդ տեղաշարժերի ընթացքով է պայմանավորված ազգային այն զարթոնքը, որ XIX դարի 50—60-ական թթ. հատկանշում էր արևելահայ առաջավոր մտքի անցումը ֆեոդալական ավանդներից դեպի համադեմոկրատական հանրակարգն ու գաղափարախոսությունը։

Սկսվում էր մի շրջան, երբ ռուս առաջավոր մտքի ազդեցության տակ ռուսական համալսարաններում սովորող ուսանողության և անդրկովկասյան դրպրոցականների մեջ խմորվում էր և արմատանում ժողովրդին ծառայելու, նրան լուսավորելու և ի վերջո նաև նրա սոցիալական և քաղաքական ազատագրման համար պայքարելու գաղափարը։

Արևելահայ կյանքում սկսվող այս շարժման անդրանիկ ջահակիրները հանդիսացան Դորպատի, Պետերբուրգի, Մոսկվայի և Ռուսաստանի այլ համալսարաններում, ինչպես նաև արտասահմանի բարձրագույն դպրոցներում սովորող արևելահայ լուսավորական մտքի ապագա ռահվիրաները։

Ինչպես որ ռուսական համալսարաններում ու բարձրագույն դպրոցներում սովորողները, այնպես էլ նույն կրթարանների հայ երիտասարդները, որոնք հիմնականում դուրս էին եկել քաղաքի և գյուղի միջնախավերից, հետզհետե մուտք են գործում ինքնակրթական խմբակների և հեղափոխական կազմակերպությունների մեջ։

Համալսարան մտնողները մեծ մասամբ կարիքավոր երիտասարդներ էին, որոնցից շատերը ապարդյուն կերպով ձրի ուսում ստանալու հարց էին բարձրացնում և հաճախ տուն վերադառնում կես ճանապարհից, առանց ավարտելու ուսումնառության լիակատար դասընթացը։

Որքան ավելի էր սրվում ինքնակալության ու ճորտատիրական կարգերի սոցիալ-քաղաքական ճգնաժամը, նույնքան ավելի էին ակներև դառնում սովորող հայ երիտասարդության գիտակցությունը ներթափանցող հեղափոխական տրամադրություններն ու գաղափարները, առավել ցայտուն արտահայտություն գտնելով ուսանողական շարժումներում նրանց առաջավոր ներկայացուցիչների մասնակցության մեջ։

Պատահական չէ, որ 50—60-ական թթ. արևելահայ մտավորականության լիբերալ և պահպանողական ղեկավարներին խիստ անհանգստացնում էր այն ներգործությունը, որ ունենում էին առաջավոր հայ ուսանողների վրա «Սովրեմեննիկի» հեղափոխիչ հայացքները, ինչպես և արտասահմանից ստացվող և

ընդհատակյա մամուլի օգնությամբ բազմացվող ու տարածվող «Կոլոկոլի» դաղափարները։

Իր անտիպ հիշատակարանում Գաբրիել Պատկանյանը տրտնջում էր, որ տակավին Մոսկվայի համալսարանում սովորելիս ուսանող Մ. Նալբանդյանը ընկել էր ռուս «նիհիլիստների» «խորթամիտ ուսմունքի» ազդեցության տակ։ «Նիհիլիստական ուսմունքի» հետ Նալբանդյանի ունեցած շփումները շարունակվեցին նաև հետագայում, երբ նա թեկնածուական հարցաքննություն բռնելու համար նախապատրաստվում էր Պետերբուրգում, ինչպես նաև ավելի ուշ՝ երբ նա դեգերում էր արտասահմանում, կապվելով ռուս հեղափոխական վտարանդիների հետ։ Գ. Պատկանյանը երբեմն իր սանի նման հափշտակությունները որակում էր որպես «ցանկություն բանալու գլխով ճանապարհ ապառաժի մեջ»[1]։

Հոգեկան տագնապ ուներ Նալբանդյանի «վտանգավոր և տարապայման բնավորության» նման դրսևորումների համար նույնիսկ Ստ. Նազարյանցը։ «Համարձակախոս և համարձակագործ լինել և մարտիրոս դառնալ յուր ազգի համար,— գրում էր նա,— գեղեցիկ գործ է, բայց մի 70 միլիոնի առաջքը կըտրել, նահատակ դառնալ, ոչ, այդ անհաճ է ինձ...»։ Նազարյանցը դա համարում էր մի գործ, որը «ոչինչ հայացք չունի դեպի մեր ազգը և նրա օգուտը», այլ «մի օդից առած ցնորք», որ նպատակ ունի «խռովություն և ապստամբություն ձգելու... ամբոխի մեջ — այլազգի ամբոխի մեջ»[2]։

Նալբանդյանի և իր համախոհների գործունեությունը ճանապարհ էր հարթում 60-ական թթ. արևելահայ հեղափոխական այն սերնդի առջև, որն իր ժողովրդին հուզող սոցիալական, քաղաքական և մշակութային խնդիրների արմատական լուծումը կապում էր Ռուսաստանում իշխող ճորտատիրության մնացուկների և նոր կազմավորվող կապիտալիստական հարաբերությունների դեմ երկրում արծարծվող հեղափոխական պայքարի հետ։

60-ական թթ. ուսանող երիտասարդության այդ սերունդը ոգեշնչված էր այն գաղափարներով, որոնց նույն այդ պահին հետևում էին նաև ռուս հեղափոխական շարժման «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության հետ կապված վրաց ուսանող երիտասարդների առաջավոր ներկայացուցիչները՝ Վիսարիոն Գոգոբերիձեն, Պյոտր Ալխազովը և Իվ. Ջարադարին[3]։

1861—62 ուսումնական տարիներին Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում տեղի ունեցած ուսանողական խլրտումներին մասնակցելու համար բարձրագույն հրամանով նկատողություն ստացան նաև հայ ուսանողներից ոմանք՝ Ս. Թումանովը, Գր. Տեր-Մկրտչյանը և Արշակ Միանսարյանցը։ Նույն տարում Պետերբուրգի ուսանողական խլրտումներին մասնակցելու համար կալանավորվեցին ու ոստիկանական հսկողության հանձնվեցին Օհանյան եղբայրները, Նապոլեոն Ամատունին, Ավետիք Թամամշյանը և Ալ. Շահվերդյանը. վերջինս նույնիսկ արտաբսվեց համալսարանից[4]։ Լրացուցիչ մի

1 Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Մոսկվա, 1935, էջ 591։

2 «Լուսա», 1901, սեպտեմբեր, էջ 456։

3 Տե՛ս С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, էջ 200 և հտ.։

4 Տե՛ս Л. Швелидзе, Очерки по истории революционного народнического движения в Закавказье, Автореферат, Тбилиси, 1966, էջ 30։ С. Г. Арешян, նշվ. աշխ., էջ 203 և հտ.։

ցուցակից պարզվում է, որ նույն տարում Պետերբուրգի համալսարանից հեռացվել են և քաղաքից արտաքսվել ևս 10 հայ ուսանողներ, որոնց կեսը՝ Ղարաբաղի և Զանգեզուրի գյուղացիների զավակներ[5]։

1868—69 ուսումնական տարում ուսանողական «անկարգություններին» մասնակցելու համար Պետերբուրգի համալսարանից վտարվեցին Վասիլ Շահվերդյանը, Պողոս Իգմայիլյանը և Միխայիլ Լունկևիչը, որոնցից առաջինը՝ լոռեցի, իսկ վերջին երկուսը՝ երևանցիներ[6]։ Մոսկվայում տեղի ունեցած ուսանողական ցույցերին մասնակցելու համար նույն այս ժամանակ համալսարանից արտաքսվածների թվում հանդիպում ենք անգրկովկասյան ազգություններին պատկանող մի շարք երիտասարդների՝ Ստ. Ամիրխանովի, Դմ. Սուլխանովի, Միք. Տեր-Ավետիսովի, Իբրահիմ Ռահիմովի, Համիդ Հաջիբեկովի, Իվան Պետրովսկու, Ստեփան Մուտուսֆյանի (ախալցխացի) և Ջավադ Իշխանյանի (շուշեցի) անուններին։ Մոսկվայի համալսարանից արտաքսվելուց հետո վերջին երկուսը մտել էին Պետերբուրգի բժշկա-վիրաբուժական ակադեմիան, ուր 1869 թ. մասնակցել էին բակունիստ Նեչաևի «Նարոդնայա ռասպրավա» կազմակերպությանը և դատվել 1870 թ.[7]։

Ուսանողական հուզումները համակում էին ոչ միայն համալսարանական երիտասարդությանը, այլև Մոսկվայի Լազարյան ճեմարանի սաներին։ 1863—69 թթ. Լազարյան ճեմարանի հոգաբարձուները խստիվ հրահանգում էին՝ խեղդել ճեմարանում արմատ ձգած «ինքնակամության, ըմբոստության, անկարգության և հեղափոխության վնասաբեր գաղափարները». Խաչատուր Լազարևի ոճը մատնող մի հրահանգում նրանք նշում էին, որ «Ֆրանսիան է բոլոր այդ գաղափարների եվրոպական ակունքը, դժբախտությունների աղբյուրը, ահա մի դար է, ինչ գործում է ի կորուստ մարդկային ցեղի»։ Լազարյան հոգաբարձուները համոզված էին, որ միայն ցարական համալսարանի համար մշակված խստությունների և անխնա վտարումների միջոցով է հնարավոր փարատել ճեմարանում բուն դրած ըմբոստության ոգին։ Ուստի և առաջարկում էին ճեմարանից անհապաղ վտարել և ոստիկանների ձեռքով ձրիաբար ծնողների մոտ առաքել այն հայ սաներին, որոնք «անընդունակ են և արատավոր»։ «Սանձահարում, տուգանում, պատիժ, հնազանդեցում, վախ, կարգապահություն, խստություն՝ սրանք անհրաժեշտ են. միայն այսպիսով կապահովվի կարգը և հաջողությունը»։ «Արգելել ամեն տեսակի հավաքույթներ, ընկերակցություններ ու կեղծ գաղափարներից ծլած չարաղետ գաղափարներ։ Մի խոսքով, պահանջել առավել ջանասիրություն, աշխատասիրություն, համեստություն ու հնազանդություն .. Հակառակ պարագային ըմբոստներին հեռացնել ու արտաքսել ճեմարանից։ Քանի որ, ուր իշխում է թողտվությունը և չկա խելացի ու օրինական տուգանում, այնտեղ բռնկում են ըմբոստ հուզումներ և հանցագործ անկարգություն»։

Ուշադրության արժանի է, որ տակավին 50-ական թթ. Լազարյան ճեմարանում ուսանելիս ռուս առաջավոր մտքի ազդեցությանն է ենթարկվում հե-

5 Տե՛ս С. Г. Арешян, նշվ. աշխ., էջ 482։
6 Տե՛ս նույն տեղում, էջ 482 և հտ.։
7 Տե՛ս Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 591 և հտ.։ Л. Швелидзе, նշվ. աշխ., էջ 95։
8 Տե՛ս С. Г. Арешян, նշվ. աշխ., էջ 488, 494 և հտ.։
9 Նույն տեղում, էջ 499։

տագայում ցարական ժանդարմերիայի զոհ դարձած Գևորգ Աբովյանը, որի հայացքների վրա, ինչպես ակնարկում էր նրա մասին գրող հայ անանուն հեղինակը հետագայում, ազդեցության կնիք էր դրել Թիֆլիսում գեղերած ռուս հեղափոխական գործիչների հետ նրա ունեցած կապը։ Ըստ երևույթին, հենց այդ էր պատճառը, որ Ալեքսանդր II ցարի վրա Դ. Կարակոզովի կատարած մահափորձից հետո, 1866 թ. նոյեմբերի 1-ին ցարական իշխանությունը Սիբիր աքսորեց անբարեհույս համարված Գ. Աբովյանին[10]։ Հետագայում Ն. Գ. Չերնիշևսկին Աստրախանի հայերին պատմելու էր, որ Սիբիրում ինքը հանդիպել է նրանց հայրենակից Աբովյանին։ Իհարկե, խոսքը վերաբերում էր ոչ թե խաչատուր Աբովյանին, ինչպես թյուրիմացաբար կարծվել է, այլ՝ հայ վաթսունական Գևորգ Աբովյանին։

Միայն Լազարյան ճեմարանի հոգաբարձուներին չէ, որ այդքան անհանգստացնում էր հայ երիտասարդությանը հասցեագրված «ըմբոստության ոգին»։ Նվազ մտահոգիչ չէր դա նաև ռուսական մայրաքաղաքների հայազգի մյուս գործիչների համար։ Ուսանող հայրենակիցներին հեղափոխական շարժումներից ու տրամադրություններից հեռու պահելու մտահոգությամբ է հենց, որ սրանց նախաձեռնությամբ ու խրախուսանքով Մոսկվայում և Պետերբուրգում «Ժողով» անվամբ ստեղծվեցին հայ ունևոր ուսանողների հայրենակցական կազմակերպությունները[11]։

Շատերը,— գրում է Մոսկվայի հայ ուսանողական «Ժողովի» մասին Ալ. Երիցյանը,— պատկառանք կրելով «Ժողովից» և ընկերական բարոյական դատաստանից վախենալով, զսպել են իրենց երիտասարդական կրքերը և առհասարակ հեռու են մնացել այն խլրտումներից, որոնց ենթարկվել են նույն միջոցին մոսկվայաբնակ մյուս ազգությունների պատկանող ուսանողները[12]։

«Ժողովի» նիստերին,— պատմում է իր ժամանակին դրանց մասնակցած բժ. Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը,— ուսանողները զբաղվում էին հայերեն խոսակցությամբ, վիճաբանությամբ, արծարծում էին մի որևէ գիտական կամ ազգային հարց, կարդում էին հայերեն հոդված, թարգմանություն, ռեֆերատ և այլն, կազմակերպում թատրոնական ներկայացումներ, զբաղվում երբեմն ուսանողական կենցաղի հարցերով[13]։ Դրանց մասնակիցների թվում հիշատակվում են Ան. Թիմուրյանը, Գևորգ Քանանյանը, Ռ. Պատկանյանը, Ալաղաթյանը, Գաբր. Տեր-Հովհաննիսյանը, Հար. Համասփյուռը, Ստ. Ստեփանյանը (Խ. Ստեփանե), Հովհ. Խատիսյանը և այլն։ «Ժողովում» դասախոսության էին հրավիրվում Ստ. Նազարյանցը և Ս. Մսերյանցը[14]։ Աչքի առաջ ունենալով «Ժողովին» մասնակցող կամ աջակցող այս մարդկանց միացնող նպատակադրումը, հասկանալի է Ալ. Երիցյանի այն վկայությունը, որ հայ ուսանողներից ոմանք ոչ միայն խուսափում էին «Ժողովի» նիստերից, այլև ծաղրում «Ժողովը», այն համարելով վնասակար, հայ ուսանողների զարգացումը ազգային սահմանափակության և նեղմտության դատապարտող մի կազմակեր-

10 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1882, մայիս, էջ 207 և հտ.։
11 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1865, էջ 110, ուսանող Ե. Բաստամյանի նամակը։
12 Տե՛ս Ալ. Երիցյան, Նյութեր հայոց պատմության համար. Ա, Թիֆլիս, 1890, էջ 56։
13 Տե՛ս «Արարատ», 1916, էջ 714։
14 Տե՛ս Նույն տեղում, նաև Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 57։

պություն, որը և պատճառ էր դառնում, որ նրանք անտարբեր մնան անգամ դեպի իրենց մայրենի լեզվի ուսումը և առհասարակ դեպի հայությունը[15]։

1863—64 թթ. նույն տիպի «ժողով» ստեղծվեց նաև Պետերբուրգում։ «Հաշվի առնելով ժամանակի մտավոր հեղաշրջումը», Պետերբուրգի «ժողովը» հետաքրքրվում էր բնագիտական դաղափարներով և դրանց լույսի տակ քննարկում նաև պատմական ու հասարակական հարցեր։ Դարվին, Հելմհոլց, Ֆոխտ, Բյուխներ, Մոլեշոտ, Բոշլ, Պիսարև և այլն, ահա անուններ, որոնք հնչում էին ուսանողական ազգային այդ հավաքույթներում։ Աչքի առաջ ունենալով այս անունների հետ կապված վուլգար մատերիալիզմն ու պոզիտիվիզմը, հասկանալի է, թե ինչ իմաստով է, որ Պետերբուրգի «ժողովը» ջանում էր ետ չմնալ ժամանակակից գաղափարներից, այլ միայն ձեռնպահ մնալ «ծայրահեղ հետևություններից»։ Վստահելի պիտի համարել Երիցյանի այն հավաստիացումը, որ Պետերբուրգի «ժողովը» «կարողացավ շատերին հեռու պահել այն նորագույն ուղղություններից ու խլրտումներից, որոնց ենթակա էին նույն ժամանակվա ուրիշ ազգությունների ուսանողները»[16]։ Կա տեղեկանք այն մասին, որ Պետերբուրգի «ժողովում» արդեն իսկ 1864 թ. կարդացվում էին Արևմտյան Հայաստանից և հայաբնակ այլ վայրերից ստացվող նամակներ և քննարկվում դրանց մեջ շոշափված ազգային խնդիրները։

Գր. Արծրունուն ուղղած իր քննադատականում Պետերբուրգի ուսանողական ժողովներին մասնակցած Ռ. Ջալալյանը հիշեցնում էր այն երեկոները, երբ «ժողովում» մտափոխանակումներ էին կատարվում ազգային կյանքի և մշակույթի հարցերի շուրջը, նպաստելով մայրենի լեզվի յուրացման, մի բան, որ Պետերբուրգից և Մոսկվայից զատ տարվում էր նաև Դորպատի հայ ուսանողական հավաքույթներում[17]։

Պետերբուրգի «ժողովի» արձանագրություններում պահվել են նիստերին մասնակցած հայ պահպանողական և լիբերալ գործիչների՝ Կ. Եզյանի, Անդրեաս և Գրիգոր Արծրունի եղբայրների, Գևորգ Եվանգուլյանի, Բ. Թավաքալյանի, Աբդ. Հովհաննիսյանի և Մարտիրոս Սիմոնյանի անունները[18]։ Հետագայում հիշատակվում են նաև Ի. Պատկանյանը, Մ. Միանսարյանը և Ալ. Երիցյանը։ Ղ. Աղայանը սրանց կցում է Ռ. Հասան-Ջալալյանի, Ավ. Բաբայանի և Սեն. Արծրունու անունները[19]։ Սրանցից Կ. Եզյանի վրա էր ընկնում, հարկավ, «ժողովի» երիտասարդ հաճախորդների միտքը ազգի և եկեղեցու հեղինակություններին դամելու հոգսը։ «Մոլորվածները» ոչ միայն գրկվում էին նրա խրախուսանքից, այլև նրա միջնորդությամբ Պետերբուրգի հարուստներից ստացվող նպաստներից։

Մինչդեռ Մ. Նալբանդյանը և 60-ական թթ. նրան համախոհ հայ հեղափոխական դեմոկրատները ուսանող երիտասարդների միտքը զբաղեցնող ազգային խնդիրները շաղկապում էին Ռուսաստանում արծարծվող համադեմոկրատական հեղափոխության և դրա հետ կապված ազգային-ազատագրական շարժումների հետ, հայ ուսանողական «ժողովները» ազգի փրկությունը տեսնում էին միայն սուլթանական լծից արևմտահայերի ազատագրվելու հեռա-

15 Տե՛ս նույն տեղում։

16 Նույն տեղում, էջ 58։

17 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 138։

18 Տե՛ս «Հորիզոն», 1913, № 280 և 283, Ստեսարի հոդվածը։

19 Տե՛ս Ղ. Աղայան, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, էջ 62 և հտ., 74, 78 և 137։

նկարների մեջ։ Այսպես, ուշագրավ է, որ Պետերբուրգի ուսանողական «Ժողովին» անդամակցող Անդրեաս Արծրունին Վենետիկից Կ. Եղյանին հասցեագրված մի նամակում տրտնջում էր, թե Մխիթարյան հայրերը կամ չեն հետաքրքրվում ազգային-քաղաքական խնդիրներով և կամ թե բաղդատելով երկու պետությունները՝ Թուրքիան և Ռուսաստանը, դերադասելի են համարում վերջինը, քանի որ նրանց կարծիքով ռուսահայերը հնարավորություն ունեն ավելի բարձր կրթություն ստանալու և ավելի օգտակար լինելու ազգին, քան տաճկահայերը։ Իր հերթին Արծրունին հաղորդում էր, որ Մխիթարյանները ջանք չեն գործ դնում խորհելու «երրորդ ճանապարհի վրա», այսինքն Հայաստանի ազատագրման ճանապարհի վրա, որ նախընտրելի էր համարում Եղյանը և «որը երկուսեն լավագույնն է» նաև իր՝ Անդրեաս Արծրունու կարծիքով։ Հետաքրքրքրական է, որ 1869 թ. Պետերբուրգի «Ժողովին» անդամակցած Ռուբեն Հասան-Ջալալյանը արևմտահայերի ազգային-մշակութային և ազգային-քաղաքական նշանակության մասին խոսք բացելով, գրում էր. «Ազգությունը XIX դարի արեգակն է... Այս գարում նախ և առաջ հարկավոր է և կա մեր համակարգության մեջ արևի — ազգության ձգտողական զորությունը... Ներկայումս այդ արևն է լույս ու տաքություն տալիս հայկական աշխարհին անմիջապես, թեև դրա ճառագայթները քանի տարածվում են դեպի Հյուսիս, այնքան նվազում, այնքան գիշերները երկարում են և օրերը ցրտում... Դիմի՛ր, դիմի՛ր Տաճկաստանի նոր կյանք ստացող մանկությանը և երիտասարդությանը դեպի քո կենդանությունը — ազգությունը. դա է տանելու քեզ և ցույց տալու իր բնական ձգտողական զորությունը դեպի մի հրաշալի լուսատու աստղ, որ մարդկություն է կոչվում... Ազգերից մի քանիքը նոր են անցել այդ դռնով, մի քանիքն էլ անցնում են։ Հայը շատ կիսալուսավորված ազգերից առաջ կանգնած է այդ դռան շեմքում. դուռը փակվելու չէ նրա առջև, դա հակառակ է նրա կյանքի խորհրդին, օրենքներին, դա պետք է անցնի և միայն դրա ետևից տաճիկը, որ տիրում է նրան»[20]։

Ռ. Հասան-Ջալալյանի այս խոհերը ըստ էության համընկնում էին գործունեության ազգային այն ուղղությանը, որը 60-ական թթ. վերջերին և 70-ականի սկզբին սկսում էր մշակել Պետերբուրգի համալսարանի ուսանող Բագրատ Նավասարդյանը, որը հետագայում հանդես էր գալու որպես արևմտահայ ազատագրական շարժման անդրանիկ վողհարներից մեկը։ «Հայրենիքիս մեղմ կլիմայի այնքան հակառակ Պետերբուրգում, ես ինձ տալիս եմ սար ու քոլով, որ կարողանամ բազմաթիվ հայ ուսանողության հյուսիսային սառնամանիքում պաղյալ և ընդարմացյալ գաղափարներին զարթեցնել և այլ ուղղություն ներշնչել, քան օտար շրջապատը, յուր գրավիչ ուղիներով, և ահա սկսում եմ, ի միջի այլոց, հայոց պատմությունը դասախոսել»[21]։

Ակներև է, որ արդեն իսկ վաթսունական թթ. լիբերալ և պահպանողական գործիչները, հսկաղրվելով Ռուսաստանի հեղափոխական շարժմանը, ազգի բուն ճանգրվանը ու ապագան սկսում էին նշմարել Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հեռանկարներում միայն։

Նրանց հայացքը չէր պարփակված ոսկ Մոսկվայի և Պետերբուրգի «ժողովներիս» ներքին խնդիրներով։ 60-ական թթ. վերջերին և 70-ականների ըս-

20 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 144։

21 Երևանի գրականության և արվեստի թանգարան, Բ. Նավասարդյանի արխիվ, 3312 բաժին, Բ. Նավասարդյանի՝ Թ. Ավդալբեգյանին գրած նամակ։

կրգրներին նրանց սկսում էր արձագանքել նաև արևելահայ գավառների հայ երիտասարդությունը. նկատի ունենք Ա. Կրիտյանի և Պ. Հայկազունու՝ Ալեքսանդրապոլում և Մեծ Ղարաքիլիսայում կազմակերպած ազգասիրական խմբերը։ Ճիշտ է, գավառահայ մտահորիզոնով սահմանափակված այդ խմբերի հայացքներն ու հեռանկարները զուրկ էին ծրագրային հստակությունից, սակայն կասկած չկա, որ ըստ էության նրանք խարխափում էին սոսկ մեր հիշատակած գործիչներին ոգեշնչող ազգային գաղափարների ոլորտում։ Ուստի, լիակատար թյուրիմացություն է սովետահայ պատմագրության մեջ վերջերս արված դյուրախոց այն հայտնագործությունը, թե հայկական թագավորությունը վերականգնելու միջնադարյան երազանքից տակավին չձերբազատված 60—70-ական թթ. այդ խմբերի ազգային ռոմանտիկները «ավել կամ պակաս չափով հանդես էին գալիս որպես Նալբանդյանի հետևորդներ»[22]։

Ինչ, խոսք, որ հայկական թագավորության մասին երազող գավառահայ այդ մտավորականները և Գերցենի ու Չերնիշևսկու մատերիալիստական դիալեկտիկայով և հեղափոխական-դեմոկրատական գաղափարներով սնվող Նալբանդյանը հասարակական-քաղաքական տարբերթաց հոսանքների ներկայացուցիչներ էին։ Կրիտյանին և իր համախոհներին անուրդել որպես Նալբանդյանի հետևորդների, նշանակում է ոչ միայն մթարկել այն իրողությունը, որ դրանք արևելահայ հասարակական-քաղաքական մտքի երկու տարբեր հոսանքների ներկայացուցիչներ էին, այլև շրջանցել արևելահայ մտավորականության՝ Նալբանդյանին հաջորդած հեղափոխական-նարոդնիկական այն սերընդի գործունեությունը, որը մինչև 80-ական թթ. արևելահայ իրականության մեջ ազգային հարցի նկատմամբ քիչ թե շատ հետևողականորեն շարունակում էր մեծ վաթսունականի հեղափոխական-դեմոկրատական ուղեգծի պաշտպանությունը։ Ուստի և պատահական չէ, երբ մեր հիշատակած գավառահայ մտավորականների դերը «խա» լույսի տակ ներկայացնող հեղինակն իսկ սահմանափակվել և սոսկ «արմատական մտածողներ» է համարել Կրիտյանին ու իր հետևորդներին[23], դրանով իսկ կասկածի տակ դնելով նրանց աղերսը 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկների և, մանավանդ, 60-ական թթ. սրանց նախորդած հեղափոխական դեմոկրատների, այդ թվում նաև Նալբանդյանի հետ։

Ի տարբերություն վերջինի, Կրիտյանը և իր համախոհները Հայաստանի ազատագրման հեռանկարները չէին շաղկապում ո՛չ Ռուսաստանի հեղափոխական շարժման, ո՛չ Հայաստանի համայնական հողատիրության նստվածքների, այլ ազգի «հայրենասիրական արյուն հեղելու»[24] հետ։ Նրանց գործունեության մասին հեղինակի հրապարակած նյութերին և հետազոտություններին ծանոթանալուց հետո նույնիսկ չի պարզվում, թե հայ ժողովրդի ո՞ր հատվածի ազատագրման մասին էր նրանց մտահոգությունը, ո՞ւմ դեմ պայքարելով կամ ի՞նչ պահանջների իրագործման համար պիտի հեղվեր նրա «հայրենասիրական արյունը»։ Բացահայտ է միայն այն, որ Կրիտյանի ու Հայկազունու անունների հետ կապված խմբերը հանդիսանում էին հայկական կազմակերպություններ, որոնք հեղափոխական-դեմոկրատական կամ հեղափոխական-նարոդնի-

22 Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 147։

23 Տե՛ս նույն տեղում, էջ 48։

24 Տե՛ս նույն տեղում, էջ 130։

կական շարժման ու գաղափարների հետ որևէ առնչություն չունեին։ Նրանք հետամուտ էին սոսկ հայ ժողովրդի ազգային-քաղաքական և ազգային-մշակութային ինքնորոշման նպատակների իրագործման, ընդսմին, որևէ կապ չունենալով համառուսաստանյան հեղափոխության խնդիրների հետ։ Որևէ կասկաս չի կարող լինել, որ նրանց հայացքները հանդիսանում էին ոչ միայն հեղափոխական-դեմոկրատներից և հեղափոխական-նարոդնիկներից տարբերանշվող, այլև նրանց հակադրված. 60—70-ական թթ. Մոսկվայի և Պետերբուրգի հայկական շրջաններում խմբված գաղափարախոսության տարատեսակությունը միայն։ Ուստի և ակներև է, որ հակառակ արված հավաստիացման, նրանք չէին կարող «հիմնականում կանգնած լինել սոցիալական և ազգային-ազատագրական ճիշտ դիրքերի վրա»[25]։ 70-ական թթ. Ալեքսանդրապոլում Նալբանդյանին գաղափարապես ավել կամ պակաս չափով մոտ կանգնած գործիչներ նշած լինելու համար կարելի էր հիշատակել բժ. Գ. Տեր-Հովհաննիսյանի կամ Ղ. Աղայանի անունները։ Հայոց թագավորությունը վերականգնելու գաղափարի փոխարեն, նշանավոր այդ գործիչներն են հենց, որ Ալեքսանդրապոլում զբաղված էին Նալբանդյանին ընտանի այնպիսի խնդիրներով, ինչպես աղայական և կղերական վերնախավերի մեկուսացման պահանջն էր, վաճառականական կապիտալի քննադատությունը կամ դեմոկրատական լուսավորության պրոպագանդը։ Հեղինակը դրանց ևս բնութագրում է իր գրքում, սակայն առանց ընդգծելու Նալբանդյանի հետ նրանց ունեցած որևէ առնչությունը, ակներևաբար նման պատիվ միայն Կրիտյանին և Հայկազունուն վերապահած լինելու համար։

Աչքի առաջ ունենալով 60-ական թթ. ռուս նշանավոր հեղափոխականների աշխարհայացքային մի շարք առանձնահատկությունները,— նրանց մատերիալիզմն ու դիալեկտիկական մտածողության որոշ տարրերը,— ընդունված է նրանց բնութագրել որպես «հեղափոխական դեմոկրատների», ի տարբերություն 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկների, որոնց աշխարհայացքին բնորոշ է սուբյեկտիվ իդեալիզմը։ Ակներևաբար այս հանգամանքն է, որ ոմանց հանգեցրել է այն սխալ մտքին, թե շեշտելով այն, ինչ բնորոշ է և առանձնահատուկ միայն հեղափոխական նարոդնիկներին, կարելի է և պետք է շրջանցել այն ամենը, ինչ հավասարապես բնորոշ է և՛ հեղափոխական նարոդնիկներին, և՛ հեղափոխական դեմոկրատներին։ Նկատի ունենք և՛ մեկ, և՛ մյուս հոսանքի հեղափոխական դիրքորոշումը ընդդեմ ցարիզմի ու սրան հենարան հանդիսացող կալվածատիրության և բուրժուազիայի՝ նրանց քարոզած ուտոպիական կամ գյուղացիական սոցիալիզմը։ Հիրավի, իրենց հեղափոխական պայքարի ընթացքում դեմոկրատական այդ հոսանքները ելնում էին Ռուսաստանում գոյություն ունեցող գյուղացիական համայնքի տեսությունից։ Այդ էր աչքի առաջ ունենում Վ. Ի. Լենինը, երբ նարոդնիկների նախահայրեր էր համարում Գերցենին ու Չերնիշևսկուն[26]։

Ինչ խոսք, որ հայ նարոդնիկական մտքի գաղափարաբանական հիմքերը ևս պիտի համապատասխանարար նշմարենք Գերցենի ու Չերնիշևսկու հայացքներից դրականապես ազդված Մ. Նալբանդյանի «Երկրագործության» մեջ։ Չէ՞

25 Նույն տեղում, էջ 148։

26 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 18, էջ 490։ Հմմտ. նաև Б. П. Козьмин, Из истории революционной мысли в России, М., 1961, էջ 647 և հտ.

որ, ինչպես ռուս նշանավոր մտածողների, այնպես նաև Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքների հիմքում դրված է գոյություն ունեցած համայնական հողատիրության նստվածքների դերարժևորումը։ Այդ նստվածքներն է, որ, ինչպես հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի ռահվիրան, այնպես նաև նրան հաջորդած հայ հեղափոխական նարոդնիկները դիտում էին որպես հայ գյուղացիությունը դեպի սոցիալիզմը և դեմոկրատիան առաջնորդող պատմական զարգացման «ուղիղ հանապարհ»։

Թանձր մշուշ տարածել հայ դեմոկրատական մտքի պատմության այս հանգուցակետի վրա, կնշանակեր անհուսորեն դոփել այն փակուղու առաջ, ուր կանգ է առել սովետահայ պատմաբաններից ոմանց միտքը, ի վիճակի չլինելով ելք գտնել հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության նախամարքսյան փուլի, ինչպես և 70—90-ական թթ. մի շարք հարցերի լուծման համար։

Իր բոլոր առանձնահատկությունների հետ մեկտեղ՝ 70-ական թթ. հայ հեղափոխական նարոդնիկների հասարակական-քաղաքական միտքը իր վրա կրում էր ազգակից նախորդի՝ Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքների ու գործունեության ազդեցության պարզ հետքերը։ Այլ կերպ պատկերացնել հարցը, նշանակում է ոչ միայն ծուռ հայելու մեջ ներկայացնել հայ հասարակական մտքի զարգացման ընթացքը, այլև գիտակցաբար կամ անգիտորեն աչք գոցել այն խոր ակոսի վրա, որ բացել էր XIX դարի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանը[27]։

Ցարիզմի ու կալվածատիրության դեմ հեղափոխական նարոդնիկները հանդես եկան մի ժամանակ, երբ դեռ նոր էր սկզբնավորվում Ռուսաստանի արդյունաբերական կապիտալիզմը, նոր կազմավորվում բանվոր դասակարգը և հազիվ նկատելի դառնում նրա մասնակցությունը երկրի հեղափոխական շարժմանը։ Այդ էր հենց պատճառը, որ նարոդնիկությունը ասպարեզ է իջնում հանուն չշերտավորված համայնական գյուղացիության։ Գյուղացիական սոցիալիզմի իր պատրանքով նարոդնիկությունը հանդես էր գալիս ինչպես համադեմոկրատական կարգեր հաստատելու, այնպես նաև ճորտատիրության մնացուկները և կապիտալիզմի բողբոջները վերացնելու հավակնությամբ։ Սոցիալիզմը և դեմոկրատիզմը նրանք հրամցնում էին որպես անքակտելի և անբաժանելի միասնություն։ Մասնավորապես գաղութային Անդրկովկասում գյուղացիների լիակատար ազատագրման հետ կապված ազգային-ազատագրական խնդիրները ևս նարոդնիկների տեսության մեջ հայտնվում էին համառուսաստանյան դեմոկրատիայի հեղափոխական խնդիրների հետ սերտաճած։

Ինչպես 60-ական թթ., այնպես էլ 70-ական թթ. Ռուսաստանում հեղափոխական տեղաշարժերին արձագանքում էին երկրի համալսարաններում և բարձրագույն դպրոցներում սովորող երիտասարդության և մասնավորապես անդրկովկասյան երիտասարդության առաջավոր տարրերը։ 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբներին դեմլեվոլեցների և նարոդովոլեցների շարժման բարձ-

27 Նալբանդյանի և նարոդնիկների միջև եղած գաղափարաբանական ընդհանրություններն ու տարբերությունները մենք նշել ենք տակավին 20-ական թթ., երբ գրել ենք «Դաշնակցության սոցիալական ծագումը» հոդվածը (տե՛ս «Նորք», 1927, գիրք առաջին, էջ 170 և հտ.)։ Նալբանդյանի և 70—80-ական թթ. հայ նարոդնիկների գաղափարական առնչությունները նշել ենք նաև հետագայում (հմմտ. «Նալբանդյանը և նրա ժամանակը», 2, էջ 583 և հտ.)։

բացող ալիքը իր ջրապտույտի մեջ էր առնում նաև արևելահայ աճող սերունդը։ Անմասն չէր դրան նաև հայ երիտասարդությունը։ «Այն ժամանակներում,— գրում էր Գ. Ղարաջյանը,— բարձրագույն և միջնակարգ դպրոցների հայ ուսանող երիտասարդության մեջ նկատելի էր վառ հետաքրքրություն դեպի հասարակական-գրական կյանքը, որպիսին չէ եղել անցյալում։ Ինքնակրթության, ինքնակարգացման տենչը, ձգտումը առանձնապես աչքի էր ընկնում»[28]։ Թիֆլիսի զանազան թաղամասերում, Անչիսխաթում, ս. Գևորգի, Խարփուխի և այլ թաղերում հիմնվեցին ուսանողական-աշակերտական դաղտնի խմբեր և ժողովներ, որոնք ընդգրկում էին գիմնազիոնների և Ներսիսյան դպրոցի բարձր դասարանների աշակերտներին։ Խմբերի պարապմունքները ղեկավարող հասակավորների մեջ Ղարաջյանը հիշատակում է վաղարշապատցի Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյան երկվորյակ եղբայրների, Դավիթ Ներսիսյանի, Թամար Ադամյանի, Ալեքսանդր Պետրոսյանի անունները[29]։

Պատահական չէ, որ ռուս զեմլևոլցիների ծրագրում հատուկ տեղ է հատկացվում Վրաստանին և Կովկասին[30]։ Զեմլևոլցիները աշխատանք էին ծավալում Թիֆլիսի և Քութայիսիի արհեստավորության և դպրոցականների խմբակներում, որոնք իրենց ազգային խառն կազմով հանդիսանում էին հեղափոխական ինքնորոշման և դաստիարակության նպատակներ հետամտող ընդհատակյա կազմակերպություններ։ Անդրկովկասում և Լեհաստանում զեմլևոլցիների խմբակներում մասնակցողների թվաքանակը պետք է որ 150 մարդուց անցած լինի[31]։ Իր հուշերի մեջ Մ. Զալյանը ուղղակի հավաստում է, որ Թիֆլիսի միջնակարգ դպրոցների աշակերտներն այս պահին գտնվում էին «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության ազդեցության տակ և համակված էին առանց ազգերի խտրության՝ «ռուս, հայ, վրացի խառն խմբակներ կազմած, ընդհանուր ռուս հեղափոխական գործին ծառայելու նպատակով»[32], զեմլևոլցիներն ունեին նաև հասակավորների ազգամիջյան, այսինքն ազգային խառն կազմ ունեցող կազմակերպություններ։

Ցարական պահնորդական երրորդ բաժանմունքը նշում էր, որ 1873—74 թթ. կովկասցիները մեծ տոկոս էին կազմում հեղափոխական աշխատանքի համար դատապարտվածների մեջ։ Ժանդարմական միջոցառումների հետևանքով կազմալուծվեցին Թիֆլիսում ու Քութայիսիում ստեղծված այդ խմբակները։ 1874—1880 թթ. անդրկովկասյան դպրոցներից վտարվեցին նման խմբակների մեջ ներգրավված 166 աշակերտ[33]։

70-ական թթ. Թիֆլիսի խմբակների հայ պատանիներից հետագայում աչքի ընկավ գանձակեցի Ստեփան Ղարդաշյանը (Кардашев), որը Թիֆլիսի երկրաչափական դպրոցը ավարտելուց հետո մտել էր Պետերբուրգի համալսարան,

---

28 Գ. Ղարաջյան. Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 12։

29 Տե՛ս նույն տեղում, էջ 14։

30 Տե՛ս П. С. Ткаченко, Революционно-народническая организация «Земля и воля», М., 1961, էջ 81։

31 Նույն տեղում, էջ 82։

32 «Հ. Հ. Դաշնակցության վաթսունամյակը», Բոստն, 1950, էջ 39։

33 Տե՛ս Ф. Махарадзе, Очерки революционного движения в Закавказье, Тифлис, 1927, էջ 11. «История классовой борьбы в Закавказье», Сборник статей, Тифлис, 1930, Документы, էջ 28։

մասնակցել նարոդնիկական կազմակերպություններին և իշխան Կորչագինձե անվան տակ երկու տարի արգելափակվել Պետրոպավլովյան բերդում։ 1874 թ. Ղարդաշյանը մտել էր Դրեզդենի պոլիտեխնիկական ինստիտուտը և նույն տարում մասնակցել նարոդնիկ Ն. Նիկոլաձեի Ժնևում կազմակերպած ուսանողական հավաքին, հարելով հեղափոխական-նարոդնիկական խմբավորմանը։ Ղարդաշյանը Ժնևի նարոդնիկական կովկասյան խմբակի անդամ էր, որը ղեկավարում էր Ջարադարին։ 1875 թ. վերադառնալով Ռուսաստան, նա ձերբակալվել է «Համառուսական սոցիալիստ հեղափոխականների» կազմակերպությանը անդամակցելու մեղադրանքով և 1877 թ. «50-ի պրոցեսի» ժամանակ դատապարտվել հինգ տարվա տաժանակրության, արսորավայրում տառապել է շուրջ 28 տարի[34]։

Ստ. Ղարդաշյանի անվան հետ կապված են զրիմահայ Եկատերինե և Հռիփսիմե Թումանովա (Թումանյան) քույրերը, որոնց գործունեությունը ժանդարմական գործերում նշված է «կովկասցիների» հետ։ Սրանց անունները հիշատակվում էին «50-ի պրոցեսում» և ըստ երևույթին միայն տվյալների բացակայության պատճառով Ե. Թումանովան չենթարկվեց դատապարտման։ Հետագայում Թումանովան Ստ. Ղարդաշյանի հետքերով մեկնեց Խարկով՝ բանտում նստած ընկերներին ազատելու համար, սակայն խուսափելով ժանդարմական հետապնդումներից, ի վերջո հարկադրված եղավ ապավինել արտասահման[35]։

Ինչպես նախընթաց տասնամյակում, 70-ական թթ. ևս Անդրկովկասում սկսված հեղափոխական շարժումը գաղափարական սնունդ և քաղաքական ուղղություն էր ստանում Ռուսաստանի և արտասահմանի ղեկավար կենտրոններից։

1872 թ. շվեյցարական Ցյուրիխ քաղաքում վրացի, հայ ու կովկասյան մյուս ազգությունների ուսանողները կազմակերպում են համաերկրային խմբակցությունը, որը «Ցարմո» անունն էր կրում։

1873—74 թթ. Պետերբուրգում գոյություն ուներ ուսանող երիտասարդության մի խմբակ, որը ժանդարմական թղթերում վրացական խմբակ էր կոչվում։ Դրա մեջ աչքի ընկնող դեր էր կատարում Օ. Վ. Քանանովան։ Հավանորեն նույն այն խմբակն էր դա, որը հայտնի էր նաև «Կովկասցիներ» անունով[36]։ Երկու դեպքում էլ խոսքն ըստ երևույթին գեմլեվոլցիների այն խմբակի մասին էր, որը 1873 թ. Պետերբուրգում կազմակերպել էր Իգնատի Իոսիլիանին, որի հետ հայերից կապված էին Թիֆլիսեցի Արշակ, Օլգա և Վարվառե Սաֆարյանները։ 1875—76 թթ. Իոսիլիանիի հետ սրանց փոխանակած նամակները և խուզարկության ժամանակ ժանդարմական օրգանների ձեռքն ընկած ընդհատակյա գրականությունը հիմք ծառայեցին խմբակի հետապնդմանը։ Գործի քննությունից ժանդարմական վարչությանը հայտնի դարձան մի շարք այլ հայ ուսանողների՝ Ստեփան Վերմիշյանի, Խուդադյանի, Սանդրո Եվանգուլյանի և

---

34 Տե՛ս Революционное народничество 70-ых гг. XIX в., М., 1964, т. I. էջ 350 և 474. История классовой борьбы в Закавказье, էջ 54 և հտ.։ «Բաներ Հայաստանի արխիվներից», 1966, № 1, էջ 57 և հտ.։

35 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958, էջ 38։

36 Տե՛ս Революционное народничество 70-ых годов XIX в., т. I, էջ 450 և հտ.։

Դավիթ Այվազյանի անունները։ Վերջինս, ի դեպ, նույնպես մասնակցել է նարոդնիկ Ն. Նիկոլաձևի ժնևում կազմակերպած ուսանողական համագումարին[37]։

Ավելի ուշ, 80-ական թթ. սկզբներին, Պետերբուրգի համալսարանում սովորող հայ ուսանողներից հեղափոխական-նարոդնիկական շարժման մեջ աչքի ընկավ Հովհաննես Մանուչարյանը։ Համալսարան մտնելով 1882 թ., հաջորդ տարում նա վտարվեց Պետերբուրգից որպես ուսանողական շարժման նարոդնիկ-առաջնորդներից մեկը, աքսորվեց Խարկով, ուր աշխատում էր նարոդնիկական «Զյորնի պերեդել» խմբակցության գաղտնի տպարանում. երկիցս նա փախել է Խարկովի ու Ռոստովի բանտից։ Կալանքի պահին իշխանություններին զինական դիմադրություն ցույց տալու համար 1885 թ. մահվան է դատապարտվել և միայն մի ամիս անց մահավճիռը փոխարինվել է 10-ամյա տաժանակրությամբ։ Փաստապես նա նստել է Շլիսելբուրգում քսան տարի, որից հետո մինչև 1905 թ. դեգերել Սախալինի աքսորավայրում։

Հայ ուսանողները մասնակցություն ունեին նաև Մոսկվայի, Կիևի, Խարկովի և Ռոստովի նարոդնիկական խմբակներում։ Մոսկվայի գիմնազիայում և տեխնիկական ինստիտուտում սովորող Կոստանդին Մամիկոնյանը ակտիվորեն մասնակցել էր «Զեմլյա ի վոլյա» պարբերականի հրատարակմանը և 1880 թ. աքսորվել Սիբիր։ Հաջորդ տարում նա Սիբիրում դատվել էր Ալեքսանդր II-ի վրա կատարված մահափորձի առիթով խնջույք կազմակերպելու և նոր գահակալին հպատակության երդումնագիր ստորագրելուց հրաժարվելու համար[38]։ Աքսորականներին պարտադրվող ստորագրությունը նրանցից նոր գահակալին հավատարմորեն ենթարկվելու խոստում էր առնում, որից հրաժարվողները, ինչպես ցույց է տալիս ռուս գրող Կորոլենկոյի Յակուտիա քշվելու հանգամանքը, նոր և ավելի ծանր պատժի էին ենթարկվում։

Կիևում ուսանողական հուզումների ժամանակ նկատելի դեր են կատարել Մել. Մուրզայանը և Գարո Միրզոյանը, իսկ Խարկովում ձերբակալվել է անասնաբուժական ինստիտուտի ուսանող Ալեքսանդր Փիրումյանը[39]։ Հետագայում Ռոստովի ուսանողական խմբակի նշանավոր գործիչների թվին էր պատկանում նաև վերը նշված Հովհաննես Մանուչարյանը։

70-ական թթ. վերջերին և 80-ականների սկզբներին Ռոստովում եղած նարոդովոլցիներից նոր-նախիջևանցիները հիշում են Սելբոն Սաղաթելի Կայալյանին (Каялов) և նրան համախոհ հայ երիտասարդների՝ Տագանրոգի գիմնազիան ավարտած բժ. Ունանյանի, Մակար Պոպովի, Սիմոն Փեշեքերյանի, Աստվածատուր Քեշեկյանի, Մկրտիչ Ոսկերչյանի և շատ ուրիշ հայ նարոդովոլցիների անունները։ Պատմում են, որ 1879 թ., հնչեցնելով «Մեր հայրենիքը» և «Ազատն աստվածը» Նալբանդյանի գերեզմանի վրա, ս. Խաչ վանքում Կայալյանի հետ մեկտեղ սրանք նշել են նրա ծննդյան 50-ամյակը։ Սովորած լինելով Մոսկվայի Լազարյան ճեմարանում, Կայալյանը լավ տեղյակ էր հայոց լեզվին ու գրականությանը։ Հիշվում է, որ Կայալյանների տանը ժամանակին հյուրընկալվել է Մարքսի բարեկամ Գերման Լոպատինը։ Կա տեղեկանք, որ Կայալյանը 25 տարով դատապարտված ու աքսորված է եղել Սիբիր, ուր աք-

---

37 Տե՛ս «История классовой борьбы в Закавказье», Документы, էջ 99, հմմտ. նաև Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1941, էջ 18։

38 Տե՛ս Մ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 18 և հտ.։

39 Տե՛ս նույն տեղում, էջ 19, 57 և հտ.։

սորվել է նաև նրա քույրը՝ Թագուհի Կայսլյանը, որը և մեռել է Սիբիրում։ 1905 թ. ուրիշ աքսորվածների հետ Մ. Կայալյանը ևս վերադարձել է Ռոստով, ուր վախճանվել է 1913 թ.[40]։

70-ական թթ. նարոդնիկական պրոպագանդայի շորշոփները հասնում էին Հայաստանի մալականների միջավայրը ևս։ Վորոնցովկա գյուղում սրանց մոտ պրոպագանդ վարելիս ռուս նարոդնիկ Վիկտոր Դանիլովը հանդիպում է իրեն վաղածանոթ Մարիա Ալեքսանդրովնա Շահվերդովային (Մ. Ա. Նադեժդինային), մեր հիշատակած հայ նարոդնիկ Վասիլի Շահվերդյանի կնոջը։ Շահվերդովայի հետ մեկտեղ Դանիլովը մալականների մոտ զբաղվում էր նարոդնիկական գրքերի ընթերցումով։ 60-ական թթ. Շահվերդովան սովորել էր Պետերբուրգում, իսկ 1874 թ. գաղափարական կապեր ունեցել ռուս գյուղացիների մեջ նարոդնիկական պրոպագանդա վարող Վ. Կ. Դեբագորի-Մոկրիևիչի հետ. հետագայում նա փոխադրվել էր Կովկաս և ուսուցչուհու պաշտոն վարել Թիֆլիսի կանանց ինստիտուտում։ «193-ի պրոցեսում» նա ամբաստանվում էր ինստիտուտի սանուհիների մեջ ամուսնության, կրոնի և իշխանությունների մասին «շիլ գաղափարներ» տարածելու համար, ինչպես նաև այն բանի համար, որ նրա ազդեցության տակ սանուհիներից ոմանք մեկնել էին Ցյուրիխ բարձրագույն կրթություն ստանալու։ Այս ամենի համար նրան հեռացնում են ինստիտուտից։

Վերը հիշատակված Դանիլովը բնութագրում է Շահվերդովային որպես լավ նարոդնիկի, շատ դոհ էր նրա վարած պրոպագանդիստական աշխատանքից և նշում է, որ Մարիա Ալեքսանդրովնան մտադիր էր անցնել նաև Ամերիկա, ռուս աղանդավորների մեջ աշխատելու և կոմունա կազմակերպելու համար[41]։ Վասիլ Շահվերդյանի և Մարիա Շահվերդովայի նարոդնիկական աշխատանքը անհետևանք չի եղել նաև հայ շրջապատի համար։ Շահվերդյանների ընտանիքում էր, որ Թիֆլիսում սովորելիս, պատանի Սիմոն Զավարյանին դիպել էր նարոդնիկական հայացքների անդրանիկ շորշոփը[42]։ Հայտնի է նաև, որ 80-ական թթ. սկզբներին Վասիլ Շահվերդյանի գրախանութը Թիֆլիսում հանդիսանում էր նարոդնիկական գրականություն տարածելու հանգույցներից մեկը։

Անդրկովկասում նոր թափ էր առնում նարոդնիկական շարժումը 70-ական թթ. վերջերին, Ռուսաստանում ծայր առած հեղափոխական իրադրության պայմաններում, երբ մեր երկրամասում ևս աշխուժացած էր հեղափոխական նարոդնիկների գործունեությունը։

Այս մի ժամանակամիջոց էր, երբ նարոդնիկների միջև սուր բնույթ ստացան տակտիկական տարաձայնությունները։

Ժողովրդական զանգվածներին ցարիզմի դեմ ըմբոստության մղելու նախընթաց ջանքերը ապարդյուն էին անցել։ Անգիտակից զինվորների սվիններին ապավինած՝ ցարիզմը կառչած մնաց ինքնակալության գահին։ Նարոդնիկական շարժման պարագլուխները հղանում են ստրկության և խավարի վրա հանգչող ինքնակալության ապարատը ջախջախելու ծրագիր։ Այս ուղղության նրանց առաջին գործնական քայլը եղավ 1879 թ. հունիսին «Զեմլյա ի վոլյայի»

---

40 Մ. Կայալյանի մասին հաղորդված տեղեկանքները քաղում ենք մեր բազմաչխատ բարեկամ պատմաբան և բանասեր Խ. Փորքչեյանի ի պատասխան մեր հարցման գրած նամակից։

41 Տե՛ս «Процесс 193-х», 1906, էջ 71 և հտ.։

42 Տե՛ս «Հ. Հ. Դ. վաթսունամյակը», էջ 1 և հտ.։

Լիպեցկում հրավիրված համագումարը, ուր հիմք դրվեց «Նարոդնայա վոլյա» կազմակերպությանը։ Լիպեցկի համագումարի հրավիրումը նախաձեռնողները հանդիսացել էին այն նարոդնիկները, որոնք հանգել էին այն մտքին, թե իշխանություն գրավելու հիմնական միջոց պիտի հանդիսանա քաղաքական տեռորը։

Ռուսաստանում քաղաքական տեռորի գաղափարը նախապես արծարծում էր «Մահ կամ ազատություն» նարոդովոլյան մարտական խմբակը, որի անդամները համոզված էին, թե առանց այդ միջոցառման հնարավոր չէ ազատություն նվաճել ժողովրդի համար։ Այդ խմբի հայացքները դարձան «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության ներսում գերիշխող գաղափարներ։ Լիպեցկի և ապա Վորոնեժի համագումարներից հետո «Մահ կամ ազատություն» խմբակի գաղափարները որոշեցին «Նարոդնայա վոլյայի» մշակած ծրագրի հիմքերը։

«Զեմլյա ի վոլյա» կազմակերպության հին այն տեսակետի կուսակիցները, որոնք իրենց ուշադրության կենտրոնում պահում էին գյուղացիությանը հուզող հողային հարցը, ընդունեցին «Ջյորնի պերեդել» անունը։ Տրոհվեց ոչ միայն «Զեմլյա ի վոլյա» կազմակերպությունը, այլև նրա անունը։ Ջյորնիպերեդելցիները որդեգրեցին «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության հողային պահանջը, իսկ նարոդովոլցիները՝ հեղափոխությունը ղեկավարող ժողովրդական կամքի գաղափարը՝ հանգելով ահարեկումների տակտիկային։

1902 թ. գրված իր «Թեկորներ իմ հուշերից» գործում Քր. Միքայելյանը պատմում է Թիֆլիսի ռուսական միջնակարգ դպրոցների սովորողների մեջ «Նարոդնայա վոլյայի» գաղափարների գտած արձագանքների մասին։ «Թիֆլիսի միջնակարգ դպրոցների այլացեղ երիտասարդությունը,— գրում է Ք. Միքայելյանը,— ազդված մի կողմից Ռուսաստանի կենտրոնների հեղափոխական պայքարի փաստերից, և մյուս կողմից՝ եկվոր պրոպագանդիստներից և գաղտնի գրականությունից՝ շարժվեց և ագահությամբ նվիրվեց ինքնազարգացման և պատրաստության հեղափոխական-հասարակական գործունեության համար։ Երիտասարդության իդեալների բնույթը որոշում էր մենակ «Նարոդնայա վոլյա» կազմակերպությունը, որն այն ժամանակ տիրում էր կովկասյան երիտասարդության մտքերին։ Միջազգային սոցիալիզմն էր իդեալը, որ պահանջում էր անձնազոհ ու անվերապահ կռիվ կյանքի հին ձևերի դեմ։ Մասնակի, տեղական, ազգային կամ զուտ քաղաքական բնույթ կրող և ոչ մի հարց ոչ որի միտքը չէր գալիս։ Ռուսը, վրացին, հայը՝ հոգով միացած ընդհանուր, աշխարհաքաղաքացիական իդեալի հանդեպ, ճանաչում էր միայն մի նպատակ, կռվի միևնույն միջոցները»[43]։

1879—1880 թթ. Թիֆլիսի նարոդնիկական այդ կազմակերպություններում մասնակցություն ունեցած հայ երիտասարդներից մեզ հասել են Հովհաննես Լորիս-Մելիքյանի, Գ. Տեր-Գրիգորյանի, Գ. Տեր-Մկրտչյանի, Քր. Միքայելյանի, Աբր. Դաստակյանի և Թամար Ադամյանի անունները։ Իր հուշագրություններում Միքայելյանը հիշատակում է սրանց պարապմունքները ղեկավարող նարոդովոլց Կորոզևի 1880 թ. կազմակերպած կոմիտեն, որի մեջ հայերից մտնում էին Գ. Տեր-Գրիգորյանը, Աբր. Դաստակյանը և Թամար Ադամյանը, իսկ վրացիներից՝ Վասիլի Սուլխանովը, Ռուխաձեն և Աննա Սուլխանովան[44]։

43 «Հ. Հ. Գ. վաթսունամյակը», էջ 24 և հտ.։
44 Տե՛ս նույն տեղում, էջ 25։

* * *

Ինչպես ակնբախ է վերը շարադրած նյութերից, 70-ական թթ. հայ նարոդնիկների մեծ մասը տոգորված էր հեղափոխական շարժման և ազգությունների ազատագրման համամարդկային գաղափարներով։ Դժբախտաբար, բացակայում են ուղղակի վկայություններ նրանց հայացքները լիովին բնութագրելու համար։ Սակայն կան ավելի ուշ շրջանի տվյալներ, որոնք անուղղակի պատկերացում են տալիս դեպի լեղալ նարոդնիկությունը անցում կատարած նրանց այնպիսի հաջորդների մասին, որոնց մոտ տակավին շոշափելի են հեղափոխական նախորդներից նրանց փոխանցված գաղափարների հետքերը։ Այդ տեսակետից հատուկ արժեք ունեն 1878—82 թթ. Մոսկվայի Գյուղատնտեսական ակադեմիայի հայ նարոդնիկ ուսանողներից ոմանց հայացքները։ Թեպետ սրանք արդեն գործում էին մի ժամանակ, երբ հայ մտավորականության այդ թվում նաև հայ նարոդնիկների, միտքը սկսում էր գամվել արևմտահայերի ազատագրման խնդրին, որի լուծումը նրանք այլևս չէին որոնում ռուսական հեղափոխական ուղիների մեջ, այնուամենայնիվ, կարևոր մի շարք կետերում նրանց հայացքների մեջ դեռ նկատել կարելի է 70-ական թթ. ռուս հեղափոխական նարոդնիկներից ժառանգած առաջավոր սվանդների հետքերը։

Բաժանելով Ռուսաստանի և Անդրկովկասի կապիտալիստական զարգացման կամ գյուղի և քաղաքի մանր արտադրությունը «համայնական տնտեսության» հիմունքներով վերակառուցելու լիբերալ նարոդնիկական հայացքները, ուսանողական մեր նշած խմբակի անդամներից ոմանք մի շարք հարցերում դեռ ազատ էին մնացել հետագա նարոդնիկներին բնորոշ ազգային սահմանափակվածությունից։ Ըստ երևույթին, պատահական չէ նաև, երբ Ք. Միքայելյանը խոսում է նրանց «աշխարհաքաղաքացիական իդեալի» մասին։ Դեռ 70-ական թթ. վերջերին և 80-ականի սկզբներին իրենց նիստերում նրանք զեկուցումներ էին կարդում՝ տոգորված անդրկովկասյան ժողովուրդների խնդիրների ու անելիքների ընդհանրության և ազգամիջյան համերաշխության գաղափարով։ Ի տարբերություն կովկասահայ ազգային-պահպանողականների, որոնք հայ կապիտալիստներին հորդորում էին գնել ու շահագործել վրաց և ադրբեջանական սնանկացող կալվածատերերի գույքերը, հայ նարոդնիկները պահանջում էին, որ հայ և ադրբեջանցի գյուղացիներն ամուր կառչած մնան իրենց հողակտորներին, որովհետև բոլորովին ցանկալի չէին համարում, որ նրանց ապրուստի հենարանը հայ վաճառականների ձեռքը անցնի։ Նման դեպքում, նախազգուշացնում էին նրանք, «մեր մեջ կմեծանան այն տեսակ վնասակար մարդիկ, որ ռուսերեն անվանում են кулак ...Մեր վաճառականների այդ գյուղատնտեսական շարժումը շատ երկյուղալի և գյուղացու համար վնասակար շարժում է, որի ազդեցությունը հետո միայն կզգացվի»[45]։

Այս մտահայեցության ցայտուն արտահայտություններից մեկն էր, այն, որ 80-ական թթ. սկզբներին 70-ական թթ. վերոհիշյալ նարոդնիկներից ոմանք գյուղատնտեսական ձեռնարկումների կազմակերպության ազգային սկզբունքին հակադրում էին աշխատանքի կազմակերպության ազգամիջյան սկզբունքը, ելակետ ունենալով այն համոզմունքը, թե կողք-կողքի ապրող անդրկովկասյան տարբեր ազգությունների գյուղացիները միայն համատեղ ջանքերով կա-

45 Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 165։

րող են դիմադրել վերահաս կապիտալիզմին»[46]։ Նվազ ուշագրավ չէ, որ նրանք ուսումնասիրում էին հայ գյուղն ու գյուղացու կյանքը՝ ղեկավարվելով ոուս «ժողովրդասեր» գրողների՝ Ֆլերովսկու, Գոլովաչովի, Ուսպենսկու, Նաումովի, Զլատովրատսկու կամ նույնիսկ նարոդնիկ սենատեսադետ Վ. Վ.-ի գրվածքներով կամ նարոդնիկական «Отечественные записки», «Устои», «Наблюдатель» ամսագրերի հանձնարարած ուղղություններով[47]։

Մոսկվայի մեր հիշատակած հայ նարոդնիկական խմբակի անդամների մեջ հատուկ ուշադրության արժանի են մանավանդ ինքնատիպ նարոդնիկ, հրապարակագիր Հովսեփ Տեր-Մովսիսյանի հայացքները։ 1878—79 թթ. «Մեղու Հայաստանի» թերթում զետեղած իր հոդվածներում Տեր-Մովսիսյանը վճռապես դատապարտում էր այն տրամադրությունները, որոնք կովկասյան ազգությունների մեջ կարող էին աղբյուր դառնալ փոխադարձ թշնամանքի։ Իր ազգային արժանապատվությունն ու ոտնահարվող իրավունքները պաշտպանող հայ ժողովուրդը պիտի հեռու մնա այնպիսի քայլերից,— գրում էր նա,— որոնք կարող էին դիպչել մյուս ժողովուրդների իրավունքներին կամ վիրավորական լինել նրանց համար։ Նա անհեթեթ էր համարում մանավանդ լիբերալ Արծրունու անձկամիտ այն պնդումը, թե Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի բնիկ լեզուներից միայն հայկականը կարող է լինել այն լեզուն, որին վերջի-վերջո պիտի տեղի տան մյուս լեզուները[48]։ Նվազ դատապարտելի չէր համարում նա վրաց ազգայնականների ընթացքը, որոնք հակակրանք ունենալով հայ բուրժուազիայի նկատմամբ, համակրանքի խոսք չեն գտնում նաև «հայոց ազգային-քաղաքական նպատակների հանդեպ»[49]։

Տեր-Մովսիսյանը գիտեր, որ ազգայնական տրամադրությունները գալիս են ոչ թե ժողովրդից, որն ավելի «լուսավոր ու մարդասեր հայացք ունի ազգերի հարաբերությունների վրա», այլ՝ ինքն իրեն «լուսավոր» համարող հայ բուրժուական ինտելիգենցիայից։ 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկներից եկող ավանդներին էր արձագանքում Տեր-Մովսիսյանը, երբ ազգայնական տրամադրությունների արմատներ էր նշմարում ոչ միայն ազնվապետական և բուրժուական դասակարգերի, այլև նրանց շահերին ծառայող պետությունների վարքագծի մեջ։ Անգամ «հայկական հարցի» լուծման հեռանկարները նա որոնում էր ոչ թե իշխող դասակարգերին սպասարկող պետությունների, այլ նրանց դիմադրող ժողովուրդների մեջ[50]։ Պատահական չէ, որ պատմա-հասարակական իրողություններ տեսնելու համար աչք ունեցող այս մտածողը մեկն էր այն նարոդնիկներից, որ դրականորեն էր գնահատում 60-ական թթ. հայ մեծ հեղափոխական-դեմոկրատին։ Վերհիշելով նրան, նա գրում է. «Մոտ քսան տարի սրանից առաջ մի ճշմարիտ ազգասեր հայ երիտասարդ այս մեծ և նշանավոր խոսքերն ասաց՝ «երկրագործությունն է ուղիղ ճանապարհը»։ Այն ժամանակ այս ձայնը չլսվեցավ։ Այժմ կարծես այդ երիտասարդի խոսքերը ընդհանրացել են, ամենքին հասկանալի դարձել. ժողովուրդը ինքն էլ սկսել է հասկանալ երկրագործության և առհասարակ հողի նշանակությունը»։

---

46 Տե՛ս նույն տեղում, էջ 482։
47 Տե՛ս նույն տեղում, էջ 483 և հտ.։
48 Տե՛ս նույն տեղում, էջ 387։
49 Նույն տեղում, էջ 388։
50 Տե՛ս նույն տեղում, էջ 390 և հտ.։

Իր մանկության շրջանի հիշողությունների մեջ պատմելով Պետերբուրգից Թիֆլիս աքսորված Վասիլ Շահվերդյանի և նրա կնոջ՝ Մարիա Ալեքսանդրովնայի գաղափարակիցների մասին, Սիմոն Զավարյանը գրում է, որ Ցյուրիխի ու Փարիզի համալսարաններում ուսանելիս սրանք համակվել էին «նիհիլիզմի» գաղափարներով ու նույն այդ գաղափարներին հաղորդակից էին դարձնում Թիֆլիսում ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի և նույնիսկ չերքեզ ու լեհ երիտասարդներին։ «Ազգության» խնդիր չկար նրանց համար,— գրում էր Ս. Զավարյանը,— հաղորդակցության միջոցը ռուսաց լեզուն էր, այնուհանդերձ տեղական լեզուները խորշված չէին։ Վրաց «Մորիս Արագվին» երգվում էր նույն ոգեվորությամբ, որչափ հայերեն «Սիծևոնակը». ռուսական երգերին հաջորդում էր «Մարսելյոզը» և լեհ հեղափոխականների «Ըղդիմոն դոժորանը»[51]։

Պիտի այնուամենայնիվ դիտենք, որ 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկները միջազգայնության գաղափարները հաճախ չէին ընկալում ու պաշտպանում Գերցենի և Չերնիշևսկու համախոհների հետևողականությամբ։

Ռուսաստանի նարոդնիկության մեջ այդ տարիներին նշմարելի էր մտավոր մակարդակի որոշակի վայրէջք՝ ընդհանուր տեղատվություն չերնիշևսկյան մատերիալիզմից դեպի պոզիտիվիզմն ու սուբյեկտիվիզմը։ Նման տեղատվություն նկատելի է նաև միջազգայնականության սկզբունքներից դեպի մեծապետական շովինիզմը թեքվող ազգային նիհիլիզմի և կոսմոպոլիտիզմի մեջ, երևույթ, որ ծայր էր տալիս ազգային նարոդնիկների տեղայնամտությանը։ Պատահական չէ, որ հարձակումներ գործելով Ռուսաստանում կրթված նարոդնիկ ուսանողների հասցեին, Բաֆֆին նրանց բնութագրում էր որպես կյանքից կտրված նիհիլիստների կամ ազգային հարցերին վերացաբար մերձեցող կոսմոպոլիտների։

Նման բնութագրումները ունեին իրենց հիմքերը։ Ըստ երևույթին, նարոդնիկների մեջ քիչ չէին այնպիսիները, որոնք մեխանիկորեն ընկալելով ազգային հարցի լուծման հեռանկարը, ելնում էին այն հայացքից, թե ազգային հարցը կլուծվի ինքն իրեն, երբ վերանա ցարական ինքնակալությունը, ճիշտ այնպես, ինչպես համոզված էին, թե Ռուսաստանում անհնարին կդառնա կապիտալիզմը, հենց որ հաղթանակի համայնական հողատիրության սկզբունքը։ Հայ նարոդնիկների մեջ ևս կային ռուսական կամ եվրոպական միջավայրում ծնված ու սնված երիտասարդներ. որոնց օտար էր տեղական ժողովուրդների լեզուն կամ որոնք, անգիտությունը առաքինություն սեպելով, այն արդարացնում էին իրենց դավանած սոցիալիզմի «աշխարհաքաղաքացիությամբ»։ Սոցիալիստական շարժման միջազգայնությունը աշխարհաքաղաքացիության հետ շփոթելով, այդպիսիներն, իհարկե, չէին էլ գիտակցում, որ մայրենի լեզվի կամ հայրենի մշակույթի անգոսնումը անջրպետ է ստեղծում սոցիալիզմի տարածման առաջ, այն վերածելով ժողովրդական զանգվածներից կտրված դոկտրինյորության։

Այս իրադրության մեջ հատկանշական է, որ Ֆ. Էնգելսին ուղղած իր նամակներից մեկում. դրականապես բնութագրելով ռուս նարոդնիկ-սոցիալիստ Գերման Լոպատինին, Մարքսը միաժամանակ նրա «տկար կետն էր համարում Լեհաստանը, ճիշտ այնպես, ինչպես չարտիզմի դպրոցն անցած անգլիացի-

51 «Հ. Հ. Դ. վաթսունամյակը», էջ 1 և հտ.։

ները, որոնք ի վիճակի չէին ըմբռնելու իռլանդական հարցը»[52]։ Մտաբերենք, որ նարոդնիկներին հատուկ այս տկարությունը Վ. Ի. Լենինը ևս բնութագրում էր որպես իշխող ազգության սոցիալիստների կողմից դրսևորված «բնդհանուր պակասությունը — այն, որ նրանք չեն ըմբռնում իրենց սոցիալիստական պարտականությունները ճնշված ազգերի հանդեպ և շարունակում են որոճալ «մեծապետական» բուրժուազիայից ընդօրինակած նախապաշարմունքները»[53]։ Նրկատենք, ի դեպ, որ ազգային հարցում «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության միջազգայնականությունը ավելի որոշ էր ու շեշտված, քան նրան հաջորդած «սարոդնայա վոլյա» կազմակերպության դիրքավորման մեջ։

«Զեմլյա ի վոլյա» կազմակերպության ծրագրի նախնական խմբագրության մեջ ազգային հարցի մասին ասված էր «Ներկայիս Ռուսաստանի կազմում մտնում են այնպիսի վայրեր և անգամ ազգություններ, որոնց համար տանելի չէ նրանց միասնությունը Ռուսաստանի հետ և առաջին պատեհ դեպքում պատրաստ են բաժանվել նրանից, ինչպես օրինակ՝ Մալոռուսիան, Լեհաստանը, Կովկասը և այլն։ Ուստի մենք չպետք է խոչընդոտ լինենք ներկայիս Ռուսաստանյան կայսրության տարաբաժանմանը՝ համաձայն տեղացիների ցանկության»[54]։

«Զեմլյա ի վոլյան» այս հարցում համամիտ էր Բակունինին, որը Ժուկովսկու հետ կազմած ծրագրում գրում էր. «Մենք կամենում ենք կայսրության կողմից ներկայիս ճնշված ազգությունների համար ամենալիակատար ինքնորոշման իրավունք՝ համաձայն իրենց սեփական բնագդների, կարիքների և կամքի, որպեսզի նրանք ֆեդերատիվ դաշինք կապեն վարից վեր և որպեսզի նրանք, ովքեր կկամենային ռուս ժողովրդի մասը կազմել, հնարավորություն ստանան նրա հետ համատեղ կազմել իսկապես ազատ, երջանիկ համակեցություն, բարեկամական և դաշնակցային կապեր ունենալով ամբողջ աշխարհի նման համակեցությունների հետ». Այս դրույթը հիմնականում պաշտպանում էր «Զեմլյա ի վոլյայի» 1878 թ. պաշտոնական ծրագիրը[55]։

Ցուցանշական է, որ 1879 թ. «Նարոդնայա վոլյայի» գործադիր կոմիտեի հրապարակած ծրագիրը շրջանցում էր Ռուսաստանի ազգությունների ազատ ինքնորոշման իրավունքը, հանդամանք, որ առարկությունների էր հանդիպում շատ նարոդնիկների կողմից։ Թեպետ և գործադիր կոմիտեն հայտարարում էր, թե ինքը դրանով նպատակ չունի հարկադրելու ճնշված ազգություններին մնալու Ռուսաստանի կազմում, այնուամենայնիվ բնորոշ է, որ ծրագրային խնդիր չճամարելով ազգային հարցը, նարոդովոլցիները նրա վճռահատումը վերապահում էին հեղափոխության հաղթանակից հետո գումարվելիք... Հիմնադիր ժողովին[56]։

Ազգային հարցի նշանակության անտեսումը վտանգավոր բնույթ էր ստանում մանավանդ 80-ական թթ. Ռուսաստանում գլուխ բարձրացնող ռեակցիայի շրջանում։

---

52 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. հատ. XXXII, էջ 430։

53 Լենին. Երկեր, հատ. 20, էջ 544։

54 Архив «Земли и Воли» и «Народной Воли», М., 1932, էջ 55։

55 «Народническая экономическая литература», М., 1958, էջ 120, հմմտ. նաև նույն տեղում, էջ 246, 331, 323, 344։

56 Տե՛ս С. С. Волк, Программные документы «Народной воли» (տե՛ս «Вопросы историографии и источниковедения истории СССР» ժողովածուն, М.—Л., 1963, էջ 413)։

ցարական ինքնակալության դեմ «Նարոդնայա վոլյայի» մղած մենամարտը վճռական պարտություն էր կրել։ Հեղափոխական նարոդնիկների փորձը՝ ցարասպանության ակտով ճանապարհ գտնել դեպի քաղաքական իշխանությունը, նրանց տեռորիստական տակտիկայի գործնական հերքման հանգեց։ Ժողովուրդը լուռ մնաց։ Մտավորականության շարքերում առաջ եկավ գաղափարական տարընթացություն։ Հարձակման անցած ցարիզմը ջախջախեց նարոդովոլցիների կենտրոնը, որից հետո սկսվեց նրանց տեղական կազմակերպությունների քայքայումը։ Հակատագրական դեր էր կատարում մանավանդ ազգային առանձնահատկությունների նկատմամբ նարոդովոլցիների ցուցաբերած դալտոնյան թյուրատեսությունը։ Բացառիկ զգայնություն դրսևորելով սեփական ազգության արժանապատվության խնդրում, նրանք կորցնում էին հարկ եղած փափկանկատությունը մյուս ազգությունների արժանապատվության ու արդարացի պահանջների նկատմամբ։ Մինչդեռ 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկները ողջունում էին ուկրաինական և Ռուսաստանի մյուս ազգությունների ազատ ինքնորոշման իրավունքը, 80-ական թթ. նրանց հաջորդած լիբերալ նարոդնիկները ժխտում կամ սահմանափակում էին ազգերի ինքնորոշման իրավունքը։ Թեպետև նրանց օրգան «Ռուսսկոյե բոգատստվո» պարբերականը գրում էր, որ չի կարելի արգելել, որ Ուկրաինայի ժողովրդական դպրոցներում դասավանդումը կատարվի ուկրաիներեն կամ որ ժողովրդական գրականություն ստեղծվի այդ լեզվով, բայց և կարծում էր ընդսմին, որ ուկրաինական լեզվի ու գրականության կարիքը չուներ ուկրաինական ինտելիգենցիան. ժամանակակից գրական բարձր մշակույթը և տեխնիկան, գրում էր այդ պարբերականը, ավելորդ են դարձնում ազգային կուլտուրաների առանձնահատկությունները։ Այդ առանձնահատկությունների լինել կամ չլինելը «նրվապագույն չափով չի ազդում մարդկային անձնավորության արմատական, էական հոգևոր ու նյութական հիմնական կարիքների զարգացման և բավարարման վրա... Այն ուղին, որ բռնել է մարդկությունը՝ տիրանալով շոգուն, էլեկտրականությանը, գրատպությանը, հակատագրական կերպով, անխուսափելիորեն տանում է դեպի ազգային տարբերությունների ոչնչացումը և ազգությունները մի ամբողջի մեջ ձուլելուն»[57]։ Ելնելով այս հայացքից, հեղինակը հանգում է այն մտքին, որ «մալոռուսական ժողովրդի վերածնությունը ոչ միայն ավելորդ է, այլև վնասակար է ու հետաշարժ։ Հանուն «սոցիալական հեղափոխության» նա ժխտում է ազգային հարցի կարևորությունը և, ի տարբերություն 60-ական թթ. ռուս հեղափոխական-դեմոկրատների, թշնամական դիրք բռնում նաև դեպի 1863 թ. լեհական ապստամբությունը[58]։

Նման դիրքավորումը ազդանշում էր նարոդնիկական շարքերում սկսված գաղափարական վերասերումը։

1881 թ. մարտիմեկյան ակտին հաջորդած ռեակցիայի տարիներին ռուս հեղափոխական նարոդնիկների շարքերում կատարված գաղափարական վերասերումը բնութագրելով, Լենինը գրում էր. «Քաղաքական մի ծրագրից, որ նրպատակ ուներ ոտքի հանել գյուղացիությանը սոցիալիստական հեղափոխություն անելու համար, ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի, դուրս եկավ մի ծրագիր, որի նպատակն էր կարկատել, «բարելավել» գյուղա-

57 Տե՛ս Б. П. Козьмин, նշվ. աշխ., էջ 428 և հտ.։
58 Տե՛ս նույն տեղում։

ցիության դրությունը պահպանելով ժամանակակից (իմա բուրժուական — Ա. Հ.) հասարակության հիմքերը»[59]։ Նույն այս երևույթի մասնավոր արտահայտություններից մեկն էր, որ նարոդնիկների շարքերում ուժեղանում էր մեծապետական կամ տեղական նացիոնալիզմի ուղղությամբ հաճախ նկատելի դարձող նրանց գաղափարական դիմորոշումը։

80-ական թթ. սկզբներին Թիֆլիսի նարոդնիկական խառն խմբակների գործածական լեզուն բացառապես ռուսերենն էր. իրենց պարապմունքների նյութը նրանք առնում էին ռուս գրականությունից և շոշափում բացառապես համապետական խնդիրներ։ Իր հուշագրությունների մեջ Ս. Ջավարյանն այս մասին գրում է. «Ղեկավար կուսակցության ծայրահեղ անտարբերությունը դեպի մաս, ճնշված ազգությունները մի կողմից, կառավարության օտարատյաց քաղաքականությունը մյուս կողմից, բնականաբար, առաջ բերին բնազդական ընդդիմություն։ Վերջինս կենդանի երևույթի վերածվեց, երբ Ալեքսանդրը III-ի սպիտակ տեռորը 1881—83-ին հալթել ու խեղդել էր կենդանի հեղափոխական շարժումը։ Շրջանակների, մանավանդ խմբերի հասունացած ու փորձառու անդամները այլևս օրվա քաղաքական անցքերի հետ առնչություն ունեցող այրող խնդիրներ չունեին։ Բնական է, որ նրանք որոնեին նոր ուղիներ, խմբերը հետաքրքրելու ու շահագրգռելու նոր նյութեր։ Ահա այդ նոր ուղիներն ու նոր նյութերը հանդիսացան ազգային, տեղական խնդիրները...»[60]։

Հեղափոխական նարոդնիկության մեջ կատարվող այդ պրոցեսը մասնավորապես դրսևորվեց նարոդնիկների ազգամիջյան կազմակերպությունների քայքայման և ազգային-նարոդնիկական կազմակերպությունների առաջացման մեջ։ Թե ինչ արագությամբ էր կատարվում այդ անցումը՝ դրան օրինակ կարող է ծառայել Թիֆլիսի նարոդովոլյան այն խմբի գործունեությունը, որի մեջ մասնակցություն ուներ հայ նշանավոր կին-հեղափոխական Թամար Ադամյանը։

80-ական թթ. սկզբներին Թամար Ադամյանը, որի մասին ժամանակակիցները միաբան վկայում էին, թե կանացի հմայքի հետ մեկտեղ ուներ նաև բնավորության արիություն և զարմանալի ազդեցություն իր ընկերների վրա, ուսանում էր Պետերբուրգի Բեստուժևյան կանանց բարձրագույն կուրսերում։ 1882 թ. ամռանը իր ծննդավայր Թիֆլիսում նա մի խումբ այլ նարոդովոլցիների հետ պրոպագանդիստական աշխատանք էր կատարում դպրոցականների և երիտասարդ կին բանվորուհիների մեջ։ Ադամյանից դատ նարոդնիկական խմբավարների մեջ մտնում էին Թիֆլիսի քաղաքային վարչության ծառայող Գոգորևիձեն, Անդրկովկասի երկաթգծի վրա աշխատող Կուդրյավցևը, դիմնազիայի վերջին դասարանի աշակերտ Բեբուտովը և, հավանաբար, նաև Պետերբուրգի համալսարանից վտարված ուսանող Մելիք Ալահվերդյանն ու Թիֆլիսի տեխնիկական դպրոցի դասատու Աբրահամ Դաստակյանը։ Խմբի աշխատանքը ղեկավարում էր Պետերբուրգից Կովկաս աքսորված ինժեներ Ալեքսանդր Սեմյոնովը։ Իվանով անվան տակ ծվարած՝ խմբի աշխատանքներին հետևում էր ահարեկիչ նարոդովոլցի գործունեությունը ժանդարմական ագենտ-պրովոկատորի դերով փոխարինած Իվան Օկլադսկին։ Օկլադսկին հատկապես հետամուտ էր այն բանին, որ խոշընդոտ ստեղծի հեղափոխական պրոպագանդը Թիֆ-

59 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 327։
60 «Հ. Հ. Դ. վաթսունամյակը», էջ 20 և հտ.։

լիսի բանվորական դանգվածների մեջ ներթափանցելուն։ Նրան հրահանգող ժանդարմներին առանձնապես մտահոգում էր այն, որ ընդհատակյա խումբը հետամուտ է կազմակերպելու գաղտնի տպարան, պատրաստելու կեղծ անցագրեր, դինամիտ, ռումբեր և այլն[61]։

1883 թ. նարոդնիկական այդ խմբակի ղեկավար Սեմյոնովը տպագրության համար պատրաստել էր կովկասյան երիտասարդությանն ուղղված մի կոչ, որի մեջ շեշտվում էր այն միտքը, թե ռուս երիտասարդությունը անձնուրացորեն և ակտիվորեն պայքարում է սոցիալիստական հեղափոխության համար՝ դլխից վանելով ամեն տեսակի «ազգային ցնդարանություն» («национальную дурь»)։ Ազգային ի՞նչ «ցնդարանության» մասին էր խոսքը։ Մինչ այդ, հարում է կոչի հեղինակ Սեմյոնովը, Կովկասի երիտասարդությունը, որը ունի հիանալի ավանդներ, սոսկ համակրական վերաբերմունք ցուցաբերելով սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարի նկատմամբ, ըստ էության նախապատվություն էր տալիս ազգային նպատակամղումներին։ Սեմյոնովը կովկասյան երիտասարդությանը կոչ էր անում հետևել ռուս երիտասարդության օրինակին և չխնայել իր արյունը հանուն համամարդկային նպատակի՝ սոցիալիստական հեղափոխության։ Նա կովկասյան երիտասարդությանը հրահանգում էր՝ մի կողմ նետել իր ազգայնականությունը և ակտիվ պայքարի ասպարեզ նետվել հանուն աղատ մարդկության։ «Ի՞նչ է ազգայնականությունը,—հարցնում է հեղինակը։—Դա մի ժողովրդի նկատմամբ ունեցած նախասիրությունն է, նախասիրություն՝ հասցված բարոյական պարտականության աստիճանի. բայց բացառիկ ուշադրության առարկա դարձած այդ ժողովուրդը աշխատավոր այն ժողովուրդը չէ, որ լքված է ամենուր, այլ պարզապես մի «խաղ» կամ քող, որ ծածկում է բուրժուական ազգայնականների մանր հաշիվները («делишки»)»[62]։

Հեղինակը կարծես տարբերանշում է բուրժուական նացիոնալիստներին և «ազգայնական նարոդնիկներին»։ Ելնելով այն դրույթից, որ ամեն մի դինվոր պարտավոր է ճակատել իր դիրքի վրա, ասում է նա, ազգայնական-նարոդնիկները պայման են դնում, որ ամեն մեկը գործի բացառապես իր ազգության համար։ Կոչի հեղինակը իրավացիորեն մերժում է նման նեղմտությունը։ Սակայն ազգայինի մեջ նա տեսնում էր միայն անցյալի իներցիան, որը պիտի հաղթահարվի հանուն համամարդկային բարձր նպատակների կատարվելիք հեղափոխության։ «Ամեն մեկը,— հարում է նա,— պետք է պայքարի դրա դեմ, և նա, ով դա չի ենթարկել իր բարձր գիտակցությանը, տակավին աղատ էակ չէ, այլ անասնական անցյալից եկող սովորությունների և բնազդների ստրուկը»։ Ահա թե ինչու կոչի հեղինակը ըստ էության տարբերություն չի տեսնում բուրժուական նացիոնալիստների և ազգային նարոդնիկների միջև[63]։

Գաղափարների հետևողականության նախանձախնդիր հեղափոխական նարոդնիկին կարող էր տարօրինակ թվալ ազգայինի և միջազգայինի, մասնավորի և ընդհանուրի մեխանիկական նման հակադրումը։ Այլ էր, սակայն, հանուն միջազգային նպատակների ազգությունների ինքնորոշման իրավունքի

61 «Былое», 1924, № 25, էջ 92 և հտ.։

62 Ц. Г. Архив Октябрьской революции, 1882, д. № 2626, часть 6, дело Александра Семёнова.

63 Տե՛ս նույն տեղում։

ժխտման հանգող կամ հանուն ազգային ինքնորոշման իրավունքի ժողովուրդների ազգամիջյան եղբայրության և իրավահավասարության սկզբունքներից հրաժարվող 80-ական թթ. ասպարեզ իջնող սեմյոնովների կոսմոպոլիտական հարցադրումը։

Սեմյոնովը շոշափում էր այժմեական ու հրատապ մի հարց, որի լուծման նպաստելու համար ենթադրում էր, որ 1882—83 ուս. տարում Թիֆլիսից Պետերբուրգ ուղևորված Թամար Ադամյանը իր հետ պիտի վերցներ կոչի բնագիրը և այն տպագրության հանձներ մայրաքաղաքի նարոդովոլյան ընդհատակյա տպարաններից մեկին։ Սակայն հեղինակը չհասցրեց տպագրության պատրաստել կոչը, և Ադամյանը Պետերբուրգ մեկնեց առանց դրա։ Մինչ այդ Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչությունը Պետերբուրգ հղած իր «տեղեկագրում» ընդգծում էր Ադամյանի «ծայրահեղ ուղղություններ», շեշտելով, որ նա մեծ հեղինակություն է վայելում սովորող երիտասարդության մեջ և հավանական համարում, որ ապագայում նա կարող է աչքի ընկնող դեր կատարել Թիֆլիսում։ Հաշվի առնելով այս նախազգուշացումը, ոստիկանական դեպարտամենտի դիրեկտոր ֆոն Պլեվեն կարգադրում է՝ Ադամյանին «արգելել այսուհետև Պետերբուրգում մնալը և նրան ետ ուղարկել իր ծննդավայրը՝ Թիֆլիս»։

Բայց ահա կատարվում է «անակնկալը»։ Թիֆլիսում Աբր. Բաստակյանի հետ միանալով, Թ. Ադամյանը նույնպես հարում է հայ ազգային-նարոդնիկական խմբակին և հետագայում հանդես գալիս որպես նրա աչքի ընկնող գործիչներից մեկը։

Ակներև է դառնում այսպիսով, որ ցարիզմի դեմ մղված պայքարում ազգային հարցի նշանակության և կովկասյան ժողովուրդների մեջ նարոդովոլյան պրոպագանդայի թերագնահատումը նպաստեց այն բանին, որ Կովկասի նարոդովոլյան կազմակերպությունները թերահավատությամբ համակվեն կազմակերպության կենտրոնների ղեկավարության նկատմամբ։

Նման պայմաններում է, որ 70-ական թթ. հեղափոխական նարոդնիկությունը զիջում էր իր տեղը 80-ական և 90-ական թթ ազգային-նարոդնիկական կազմակերպություններին, որոնցից յուրաքանչյուրը հետամտում էր իր առանձին նպատակները և քայլում իր առանձին ուղիներով։

УЧАСТИЕ ВОСТОЧНЫХ АРМЯН В РЕВОЛЮЦИОННОМ ДВИЖЕНИИ РОССИИ И ЗАКАВКАЗЬЯ (1860 — 70-е гг.)

Академик АН Арм. ССР А. Г. ИОАННИСЯН

(Резюме)

Деятельность революционных народников в России явилась дальнейшим этапом движения революционных демократов 60-х гг. XIX века. В статье обращено внимание на социально-политические и идейные сдвиги университетской и школьной молодежи и их участие в революционном движении России и Закавказья.

Консервативные и либеральные круги армянской общественности Петербурга и Москвы относились к захватившему армянскую молодежь революционному движению с большой неприязнью. Характерно,

что еще в начале 60-х гг. по их инициативе в Петербурге и Москве создавались организации студентов-армян, которые оказывали сопротивление выходившим за рамки национальной ограниченности настроениям армянского студенчества и ставили перед собой задачу склонить его внимание к вопросам сугубо национальным.

В 70-х гг. на революционно-демократические настроения армянской студенческой молодежи оказывало заметное влияние революционное народничество. Аналогичное явление наблюдалось и среди грузинской и армянской школьной молодежи в Тифлисе. Ряд выдающихся участников революционных организаций народников-армян прымкнул к движению народников еще в пору учебы в средних учебных заведениях.

В статье упомянуты армяне-народники, принимавшие участие в революционных выступлениях студенчества в высших учебных заведениях Петербурга, Москвы, Киева и Харькова, подвергавшиеся административным взысканиям и судебным наказаниям, вплоть до многолетней каторги.

Ведя самоотверженную борьбу за свержение царизма и помещичье-капиталистического строя рука об руку с революционерами других народностей империи, армяне-народники были преданы идее демократии и социализма и боролись с рутинными и эксплуататорскими отношениями царской России. Они объединялись в межнациональных революционных организациях, преследовавших общую цель и единый путь ее осуществления.

Следует тем не менее учесть, что идеи межнациональной солидарности народностей России народники 70-х гг. не всегда и не везде воспринимали с последовательностью, свойственной революционным демократам 60-х годов. Наблюдается известное снижение их теоретического уровня и сужение идейного кругозора. Замечается определенный отход от материалистического мировоззрения и диалектического мышления Герцена и Чернышевского в сторону позитивизма, релятивизма и субъективизма. Налицо также отступление от присущего революционным демократам 60-х гг. последовательного интернационализма к космополитизму и национальному нигилизму, столь часто уживавшимися с непомерным подчеркиванием значения и роли своей собственной национальности. Нередко, исходя из механистического подхода к разрешению национального вопроса, иные народники считали, что с ликвидацией самодержавия национальный вопрос разрешится сам собою, подобно тому как они были убеждены также в том, что капитализм станет невозможным, коль скоро восторжествует принцип общинного землевладения.

Смешивая торжество интернационализма с воцарением идей космополитизма, народники не учитывали, что незнание языков и культуры «инородцев» будет лишь препятствием на пути к победе демократии и социализма и превратит проповедь высоких принципов революции в оторванное от народных масс доктринерство.

При наличии подобного подхода к задачам пропаганды народнических идей не было случайностью, что народовольцы отказывались признать национальный вопрос вопросом программным и предоставляли его рассмотрение лишь будущему учредительному собранию.

Игнорирование национального вопроса принимало опасный оборот, тем более в условиях нараставшей царской реакции 80-х годов. Характерно, что «Русское богатство» — легальный орган народников — обвинял украинцев в преувеличении роли национальных отличий, считая, что существование этих отличий «ни малейшим образом не влияет на развитие и удовлетворение коренных, существенных духовных и материальных нужд человеческой личности» и что дальнейшее развитие производительных сил «неизбежно ведет к уничтожению национальных различий и слиянию национальностей в одно целое».

Подобная явно умозрительная установка, свидетельствовавшая лишь о либеральном перерождении самого народничества, дала о себе знать и среди народников 80-х годов в Закавказье. В 1883 г. один из руководящих деятелей тифлисской организации народовольцев Александр Семенов в прокламации к молодежи Кавказа призывал отбросить в сторону свою «национальную дурь» и отдать все силы на борьбу за «свободу человечества».

Призыв Семенова не был случайным. Он свидетельствовал о том, до чего местное руководство народовольцев было оторвано от конкретных вопросов, волновавших народности края. Пропагандистская работа среди народностей велась главным образом на русском языке и касалась лишь общегосударственных задач. Игнорировались жгучие вопросы, волновавшие местные народы, что, в условиях бушевавшей реакции, привело еще в 1882 г. к распаду краевой организации народовольцев и созданию национальных организаций, кои, отрываясь от общереволюционных задач, ограничивались лишь изучением и выдвижением вопросов освобождения своей национальности.

Таким образом, непонимание значения национального вопроса для борьбы за свержение царизма и отсутствие должного подхода к революционным задачам среди народностей Закавказья привели к тому, что известная часть народовольцев окраинных организаций проникалась недоверием к руководству партийных центров.

В этих именно условиях революционное народничество 70-х гг. в условиях нараставшей в России реакции 80-х годов уступило свое место организациям национал-народников, преследовавшим свои особые цели и избравшим свои особые пути.